ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» հունիսի 2023թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Սուքիաս Գրիգորյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության արագ արձագանքման և վերլուծական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով «Վայթ Քոմունիքեյշն» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ չափաբաժինների մասով Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 10-րդ, 11-րդ, 14-րդ չափաբաժինների մասով Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 12-րդ չափաբաժնի մասով Լենտեքս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 13-րդ չափաբաժնի մասով «Դելտա սեքյուրիթի» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի հայտը մերժել,
- 12-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Դելտա սեքյուրիթի» ՍՊԸ-ի, ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 13-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Լենտեքս ՍՊԸ-ի, ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ չափաբաժինների մասով՝ ԶԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ի, Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով՝ ԶԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ի, Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի, Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ-ի, 12-րդ, 13-րդ չափաբաժինների մասով՝ Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Սուքիաս Գրիգորյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան